

Համարը N 10

Տիպը Արձանագրային որոշում

Սկզբնաղբյուրը Չի հրապարակվել

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն

Ստորագրող մարմինը ՀՀ Վարչապետ

Վավերացնող մարմինը

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը

Տեսակը Մայր

Կարգավիճակը Գործում է

Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 15.03.2012

Ստորագրման ամսաթիվը 29.03.2012

Վավերացման ամսաթիվը

Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

## Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ

#### Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց

15 մարտի 2012 թվականի N 10

#### 14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության Նախագահի 2009 թվականի մայիսի 6-ի ՆԿ-68-Ա կարգադրության հավելվածի 96-Դ-6 կետի՝

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթական համակարգի՝ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման գործընթացի ընդլայնման ծրագրին և դրա իրականացման ժամանակացույցին՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

2012 թ. մարտի 29, Երևան

S. Սարգսյան

[Հավելված N 1](#)  
[ՀՀ կառավարության 2012 թ.](#)  
[մարտի 15-ի նիստի N 10](#)  
[արձանագրային որոշման](#)

[Հավելված N 2](#)  
[ՀՀ կառավարության 2012 թ.](#)  
[մարտի 15-ի նիստի N 10](#)  
[արձանագրային որոշման](#)

## Ծ Ր Ա Գ Ի Ր

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԸՆԴՀԱՅՆՄԱՆ

#### Ա. Ներածություն

1. 2005թ. մայիսի 19-ին ՀՀ կրթության և գիտության նախարարը ստորագրեց Բոլոնիայի անդամ երկրների կրթության նախարարների Բերգենի Կոմյունիկեն, և այսպիսով Հայաստանը պաշտոնապես միացավ Բոլոնիայի գործընթացին, ստանձնելով պատասխանատվություն՝ մինչև 2010թ. ավարտել Բոլոնիայի գործընթացի հիմնական սկզբունքների իրականացումը ըստ գործողությունների առանձին ուղղությունների, և դառնալ կազմավորվող Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (ԵԲԿՏ) մաս:
2. Ինտեգրումը ԵԲԿՏ-ին ենթադրում է ՀՀ միջին, բարձրագույն և շարունակական կրթական համակարգում խորքային փոփոխությունների իրականացում Բոլոնիայի գործընթացի պահանջներին համապատասխան: Համաձայն Բոլոնիայի կոնվենցիայի սա նշանակում է.
  - 1) ներմուծել համընթեռնելի և համադրելի որակավորումների եռաստիճան համակարգ,
  - 2) կատարել անցում ուսուցման կազմակերպման կրեդիտային համակարգին՝ միաժամանակ նախաձեռնելով կրթական ծրագրերի արմատական վերափոխումներ,
  - 3) ներդնել մասնագիտական կրթության որակի գնահատման և ապահովման Եվրոպական չափանիշներ՝ նպաստելով որակի հավաստման ազգային համակարգի ստեղծմանը,
  - 4) կրեդիտների կուտակման և փոխանցման, որակի գնահատման և ապահովման համակարգերի, ճանաչման թափանցիկ ընթացակարգերի, ինչպես նաև դիպլոմի համաեվրոպական հավելվածի ներդրման միջոցով խթանել ուսանողների և դասախոսների շարժունությունն ու Հայաստանի բարձրագույն կրթական համակարգի գրավչությունը,
  - 5) ստեղծել նախադրյալներ շարունակական կրթության համակարգի ձևավորման և զարգացման համար,
  - 6) բարձրացնել ուսանողների դերը և մասնակցությունը, մասնավորապես բուհերի կառավարման գործընթացում,
  - 7) ինտեգրել բուհերում կրթական և գիտական գործընթացները:

#### **Բ. Իրականացված աշխատանքները և ձեռքբերումները Բոլոնիայի գործընթաց. Եվրոպական բարձրագույն կրթական տարածք Որակավորումների եռաստիճան համակարգ**

3. Հայաստանում բարձրագույն կրթության երկաստիճան (բակալավրիատ, մագիստրատուրա), այժմ եռաստիճան, կառուցվածքի ներդրումը սկսվել է Հայաստանի Պետական ճարտարագիտական համալսարանում 1992թ.-ին: Այնուհետև այն ներմուծվել է նաև Երևանի պետական համալսարան (1995թ.) և Հայաստանի գյուղատնտեսական ակադեմիա (1998թ.): Մագիստրոսի կրթական ծրագրով է սկսվել Հայաստանի ամերիկյան համալսարանի գործունեությունը (1991թ.): Անցումը բարձրագույն կրթության մեկ աստիճանից երկաստիճան համակարգին նշված բուհերում իրականացվել է գիտափորձի միջոցով՝ ՀՀ կառավարության համապատասխան որոշումների և բուհերի կանոնադրությունների հիման վրա: Բակալավրի

և մագիստրոսի որակավորումները օրենսդրորեն ամրագրվել են ՀՀ «Կրթության մասին» օրենքով 1999թ.-ին:

4. Համաձայն «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի (2004թ.) և ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 31-ի N 425-Ն որոշման՝ 2004/2005 ուսումնական տարվանից Հայաստանում ներդրվել է բարձրագույն կրթության երկաստիճան համակարգը: 2004թ.-ից ՀՀ բոլոր բուհերում դադարեցվել է ընդունելությունը դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագրով, իսկ նույնանուն որակավորումը նշված օրենքով հավասարեցվել է մագիստրոսի որակավորմանը: ՀՀ «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքները նախատեսում են նաև հետազոտողի որակավորման շնորհումը հետբուհական մասնագիտական կրթության եռամյա ծրագրի ավարտին, որը Բոլոնիայի տերմիններով բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի երրորդ աստիճանն է: 2006թ.-ին հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի ներդրման» ծրագիրը: Ներկայումս աշխատանքներ են տարվում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի միասնական բնութագրիչների մշակման ուղղությամբ:
5. Նշված օրենքները բարենպաստ օրենսդրական հիմքեր են ստեղծել բարձրագույն և հետբուհական կրթության համակարգի ընդհանուր բարեփոխումների, ինչպես նաև՝ Բոլոնիայի սկզբունքներով ուղղորդվող կառուցվածքային բարեփոխումների համար: Դրանց ընդունումից հետո ՀՀ կրթության և գիտության նախարարությունն իր աշխատանքը նպատակաուղղել է միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում բազմակողմանի բարեփոխումների իրականացմանը, որոնք ներառում են կրթության կառուցվածքը, բովանդակությունը, կառավարումը, և որոնց նպատակն է ապահովել ՀՀ մասնագիտական կրթության համակարգի առավել ինտեգրումը ԵԲԿՏ-ին և խթանել միջազգային ասպարեզում կրթական համակարգի մրցունակությունը:

### **Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգ**

6. Բոլոնիայի գործընթացի շրջանակներում կատարվող աշխատանքների կարևորագույն ուղղություններից է բարձրագույն կրթության կազմակերպումը ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով՝ Եվրոպական կրեդիտների փոխանցման համակարգին (ԵԿՓՀ- ECTS) համապատասխան: ՀՀ կառավարությունը 2005 թվականի դեկտեմբերի 22-ին հաստատել է «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» N 2307-Ն որոշումը, որից հետո համապատասխան քայլեր են ձեռնարկվել բարձրագույն կրթության՝ կրեդիտային համակարգով կազմակերպման ուղղությամբ: 2006թ.-ի նոյեմբերին ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հաստատվել է «Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործման ժամանակացույցը», որը միասնական պահանջներ է սահմանել բարձրագույն կրթության ոլորտի համար կրեդիտային համակարգին անցման, կրթության որակի ապահովման համար: Կրեդիտային համակարգի անցման գործընթացին աջակցելու նպատակով մշակվել և բուհերին են տրամադրվել «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսման գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգը», կրեդիտային համակարգի ներդրման մեթոդական ուղեցույցը: Գործող մասնագիտությունների առարկայական ծրագրերը և ուսումնական պլանները վերակազմվել են մոդուլային սկզբունքով և կրեդիտային հենքով: Բուհերի մեծ մասում արդեն իսկ բավարար դրական փորձ է կուտակվել, մասնավորապես՝ բուհերի կողմից մշակվել, հրատարակվել և շրջանառության մեջ են դրվել դասախոսների և ուսանողների համար նախատեսված «Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման ուղեցույց»-ները: Որոշակի մասնագիտություն-ների գծով մի շարք բուհերի (ՀՊՃՀ, ԵՊՀ, ԵՊՏՀ, ԵՊԼՀ, Ռուս-հայկական (սլավոնական) համալսարան և այլն) կոնսորցիումի արդյունքում ձեռք է բերվել համաձայնություն՝ միասնական չափանիշներով կրեդիտային համակարգին անցնելու կապակցությամբ: Նույնատիպ աշխատանքներ են ընթանում նաև Վ.

Բրյուսսելի անվան պետական լեզվաբանական համալսարանում, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում, ինչպես նաև Հայաստանի մանկավարժական բուհերում:

### **Որակի գնահատում և ապահովում**

7. Եվրոպական կրթական տարածքին Հայաստանի ինտեգրման ուղղությամբ կատարվող կարևորագույն աշխատանքներից է եվրոպական չափանիշներին համապատասխան որակի գնահատման և ապահովման ազգային համակարգի ստեղծումը: ՀՀ կառավարության 2008թ.-ի նոյեմբերի 27-ի N 1486-Ն որոշմամբ հիմնադրվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը: 2008թ.-ի մարտի 4-ին Բրյուսսելում տեղի է ունեցել Որակի Հավաստման Եվրոպական Ռեգիստրի հիմնադիր նիստը, որին մասնակցում էին Բոլոնիայի անդամ երկրները և սոցիալական գործընկերները: Հայաստանը դարձել է Որակի Հավաստման Եվրոպական Ռեգիստրի լիիրավ անդամ: «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը դեռևս չի անդամակցում «Որակի Ապահովման Եվրոպական Ցանցին» (ENQA), սակայն գործընթացը սկսված է: ՈԱԱԿ-ը հանդիսանում է Որակի Ապահովման Եվրոպական Ցանցի փոխկապակցված անդամ:
8. Գրեթե բոլոր բուհերում ստեղծվել են որակի ապահովման ներբուհական միավորներ, որոնց կողմից իրականացվում են բուհի որակի գնահատման և ապահովման մեխանիզմների ներդրման աշխատանքներ: Մասնավորապես, ներդրվել է «Որոֆեսորադասախոսական կազմի աշխատանքների գնահատման բազմագործոնային ռեյտինգավորման (վարկանիշային) համակարգ»-ը: Կատարվել են ներքին մոնիտորինգային հետազոտություններ՝ ուսանողների, դասախոսների և գործատուների շրջանում, որոնք թույլ են տվել հստակեցնել այն բացթողումները, որոնք առկա են ուսումնական գործընթացում: Բուհերը մշակել և իրենց խորհուրդներում հաստատել են զարգացման ռազմավարական ծրագրեր և հայեցակարգեր:
9. «ԵԲԿՏ-ի որակի ապահովման չափանիշներին և ուղեցույցներին» համապատասխան մշակվել և ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N959-Ն և 2011թ.-ի հունիսի 30-ի N 978-Ն որոշումներով հաստատվել են «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները» և «ՀՀ-ում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը»:
10. 2011թ.-ի երկրորդ կիսամյակում ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել է երկու բուհերի՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի և Երևանի պետական ճարտարապետության և շինարարության պետական համալսարանների փորձնական հավատարմագրում՝ համաձայն վերոնշյալ կարգի և չափանիշների:
11. «Կրթության որակ և համապատասխանություն» (ԿՈՀ) վարկային ծրագրի միջոցներով ՈԱԱԿ-ը 2011թ.-ից ստանում է փորձագիտական աջակցություն Նիդերլանդական հավատարմագրման գործակալության կողմից (Netherlands-Flemish Accreditation Agency (NVOA)) իր աշխատակազմի կարողությունների զարգացման և որակի ապահովման ներքին և արտաքին ընթացակարգերի, ձեռնարկների մշակման նպատակով: Բացի այդ 2012թ.-ից բուհերին կտրվեն դրամաշնորհներ «ԵԲԿՏ-ի որակի ապահովման չափանիշներին և ուղեցույցներին» համապատասխան ներբուհական որակի ապահովման համակարգերի ներդրման համար:

### **Որակավորումների ազգային շրջանակ**

12. Բոլոնիայի գործընթացի առանցքային ուղղություններից է եվրոպական որակավորումների շրջանակին համապատասխան որակավորումների ազգային շրջանակի ստեղծումը (ՈԱԾ): ՈԱԾ-ի մշակման աշխատանքները ՀՀ ԿԳ Նախարարության կողմից ընթացել են Եվրոպական խորհրդի փորձագիտական աջակցությամբ: ՀՀ կառավարության 2011 թ.-ի մարտի 3-ի N332-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակը (Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումները և դրանց համապատասխան ընդհանրական բնութագրերը), ինչպես նաև կրթության

որակավորումների ազգային շրջանակի ներդրման և գործարկման ուղեցույցը և ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի ներդրումն ու գործարկումն ապահովող միջոցառումների կատարման ժամանակացույցը:

**Ուսանողների, դասախոսների, շրջանավարտների շարժունություն և որակավորումների, դիպլոմների ու կրթական վերջնարդյունքների փոխձանաչում**

13. Ուսանողների, դասախոսների և շրջանավարտների անարգել շարժունությունը ԵԲԿՏ-ի կարևորագույն բնութագրիչներից է: Այսօր Եվրոպայում առկա են աշխարհագրությունից անկախ ուսման արդյունքների փոխձանաչման հուսալի մեխանիզմներ՝ Եվրոպական կրեդիտների փոխանցման համակարգ(ECTS), դիպլոմի միասնական ներդիր, ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ (ENIC/NARIC) ցանց, որոնք լայնորեն օգտագործվում են միջազգային և Եվրոպական տարածքում ուսանողների շարժունության խթանման և ընդլայնման նպատակով: Ակադեմիական շարժունության համարժեք պայմաններ են ստեղծված նաև դասախոսների և գիտաշխատողների համար:
14. Հայաստանում մեծածավալ աշխատանքներ են կատարվել նաև շարժունության խթանման և որակավորումների ձանաչման ուղղությամբ: 2004թ.-ին ՀՀ Ազգային Ժողովը վավերացրել է Լիսաբոնի որակավորումների ձանաչման կոնվենցիան (ընդունված 1997թ.-ին), որը իրավական հիմք է հանդիսացել «Ակադեմիական փոխձանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» (ԱՓՇԱՏԿ) հիմնադրամի ստեղծման համար:
15. ԱՓՇԱՏԿ հիմնադրամը 2006թ.-ի հունվարից դարձել է միջազգային ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ ցանցի լիիրավ անդամ: Ներկայումս ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ ցանցի բոլոր եվրոպական անդամները և նմանատիպ կենտրոնների այլ տարածաշրջանային (Միջերկրական, Ասիա-Խաղաղօվկիանոսյան և այլն) ցանցերը պաշտոնապես ձանաչում են ԱՓՇԱՏԿ-ը որպես Հայաստանյան ներկայացուցիչ: 2006թ.-ից ԱՓՇԱՏԿ-ի կողմից իրականացվում է օտարերկրյա որակավորումների գնահատում և ձանաչում՝ համաձայն Լիսաբոնի կոնվենցիայի և միջպետական համաձայնագրերի դրույթների: Արտերկրում ձեռք բերված որակավորումները ՀՀ-ում անցնում են գնահատման և ձանաչման գործընթաց, որի արդյունքում տրվում է որակավորման ամբողջական, մասնակի ձանաչման կամ մերժման տեղեկանք՝ հայերեն կամ անգլերեն լեզուներով, համաձայն միջազգային չափանիշների: ԱՓՇԱՏԿ-ի կողմից տրամադրվում է նաև տեղեկատվություն ազգային որակավորումների վերաբերյալ: ՀՀ-ում ձեռք բերված որակավորումներն արտերկրներում անցնում են նմանատիպ գնահատման և ձանաչման գործընթաց, որն իրականացվում է ընդունող երկրի համապատասխան լիազոր մարմնի կողմից: Այդ նպատակով ԱՓՇԱՏԿ-ի կողմից ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ ցանցի անդամ երկրների լիազոր մարմիններին տրամադրվում է տեղեկատվություն և խորհրդատվություն: Բացի այդ, ԱՓՇԱՏԿ-ը որակավորումների վերաբերյալ տեղեկանքներ է տրամադրում այն անհատներին, ովքեր մտադրված են իրենց ուսումը շարունակել կամ աշխատել արտերկրում, ինչպես նաև ճշգրիտ և հավաստի տեղեկատվություն է տրամադրում ՀՀ պետական մարմիններին, բուհերին, գործատուներին: Այսպիսով, Հայաստանն այսօր միջազգային և եվրոպական պահանջներին համապատասխան իրականացնում է դիպլոմների և կրթական վերջնարդյունքները հաստատող այլ փաստաթղթերի՝ վկայականների և այլն, փոխձանաչման գործառույթ:
16. ՀՀ ԿԳ նախարարության և ԱՓՇԱՏԿ-ի կողմից համատեղ նախապատրաստվել է բուհական ավարտական փաստաթղթի (դիպլոմի) միասնական հավելվածը, որը հաստատվել է 2007թ. Նոյեմբերի 23-ի ՀՀ կառավարության N1412-Ն որոշմամբ: Կրեդիտների կուտակման և փոխանցման, որակի գնահատման և ապահովման համակարգերի ներդրումը, ձանաչման թափանցիկ ընթացակարգերի, ինչպես նաև դիպլոմի համաեվրոպական հավելվածի ներդրման միջոցով խթանվում է ուսանողների և դասախոսների շարժունությունն ու Հայաստանի բարձրագույն կրթական համակարգի գրավչությունը:

17. ՀՀ կառավարության 2011թ.-ի օգոստոսի 25-ի N1240-Ն որոշմամբ հաստատվել է «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության» կարգը:

### **Ուսանողների մասնակցության և ներգրավվածության բարձրացում**

18. Ուսանողների մասնակցությունը բուհի ակադեմիական և կառավարման գործընթացներին խիստ կարևորվում է ԵԲԿՏ-ում, քանի որ ուսանողները հանդիսանում են բարձրագույն կրթության հիմնական շահառուները: ՀՀ-ում իրականացվել են մի շարք կարևոր քայլեր ուսանողների դերի և ներգրավվածության բարձրացման ուղղությամբ: Մասնավորապես,
19. 2004թ.-ին ընդունված «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով սահմանվել են ուսանողների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքով սահմանվել է, որ ուսանողն իրավունք ունի ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար պարտադիր և ոչ պարտադիր դասընթացներ, մասնակցելու իր կրթության բովանդակության ձևավորմանը (ուսումնական դասընթացների եւ մասնագիտացման ընտրությանը), մասնակցելու բուհի համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին, բողոքարկելու բարձրագույն ուսումնական հաստատության ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները և այլն: Օրենքը նաև սահմանել է, որ բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսանողները կարող են միավորվել ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում և ուսանողական այլ կազմակերպություններում, որոնց ստեղծման եւ գործունեության կարգը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը: Համաձայն «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի՝ բուհական պրոֆեսորադասախոսական կազմը, գիտաշխատողները և ուսանողներն օժտված են ակադեմիական ազատություններով: Նրանք իրավունք ունեն մասնակցելու համալսարանի գործունեությանն առնչվող բոլոր խնդիրների քննարկմանը և ընտրովի մարմինների աշխատանքին:
20. Ըստ այդմ ներկայումս բուհերի կառավարման մարմիններում անդամների թվի առնվազն քսանհինգ տոկոսն ուսանողներն են, որոնց առաջադրումն ու ընտրությունն իրականացնում է համապատասխան մակարդակի ուսանողական ինքնակառավարման ընտրովի ներկայացուցչական մարմինը՝ ուսանողական խորհուրդը:
21. Շատ կարևոր առաջընթաց է նաև ուսանողներին աջակցող և խթանող կառույցների ստեղծումը ազգային մակարդակում: Ներկայումս Հայաստանում գործում են մի քանի կառույցներ, ինչպիսիք են Հայաստանի երիտասարդական հիմնադրամը, Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիան, Հայաստանի երիտասարդության ազգային խորհուրդը, որոնք իրականացնում են բազմաբնույթ ծրագրեր՝ ուղղված ուսանողների և երիտասարդության խնդիրների լուծմանը, խթանում են ուսանողական ակտիվությունը և նախաձեռնողականությունը, ինչպես նաև մասնակցում են ուսանողների ներգրավվածության բարձրացմանն ուղղված քաղաքականության ձևավորմանը: Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիան սկսել է նաև Եվրոպական ուսանողական միությանն անդամակցելու գործընթացը, ինչը կարևոր քայլ է միջազգային ուսանողական կառույցների հետ կապերի ամրապնդման և արդյունավետ քննարկումների ու փորձի փոխանակման հարթակի ստեղծման ուղղությամբ:

### **Հրապարակայնության և տեղեկատվության ապահովում**

22. ՀՀ ԿԳ նախարարությունը համակարգված և հետևողականորեն ամբողջական տեղեկատվություն է տրամադրում հասարակության բոլոր շահագրգիռ կողմերին Հայաստանի Եվրոպական բարձրագույն տարածքին ինտեգրվելու ուղղությամբ կատարվող

աշխատանքների վերաբերյալ: Թարգմանվել, հրատարակվել և բուհերին են տրամադրվել <<Որակավորումներ-հայեցակարգի ներածություն>>, <<Եվրոպական բարձրագույն տարածքի որակավորումների շրջանակ>> և <<Ճանաչման նոր մարտահրավերներ>> գրքերը: ՀՀ ԿԳ նախարարության և Կրթության ազգային ինստիտուտի կողմից հրատարակվել են <<Բարձրագույն կրթություն>> ժողովածուի 2-4 հատորները, որտեղ ընդգրկվել են Բոլոնիայի գործընթացին առնչվող բազմաթիվ փաստաթղթեր, ինչպես նաև ուսանողների համար նախատեսված տեղեկատվական-մեթոդական ուղեցույց: ՀՀ ԿԳ նախարարության կողմից, որպես բուհական ուղեցույց, 2008թ.-ին երաշխավորվել է բարձրագույն կրթության ռազմավարական կենտրոնի կողմից հրատարակված <<Բոլոնիայի գործընթացը Հայաստանում>> գրքույկը (տպագիր և էլեկտրոնային տարբերակներով), որտեղ նկարագրված են Բոլոնիայի գործընթացի նպատակներն ու խնդիրները, ինստիտուցիոնալ կառուցվածքը, պատմական ակունքները և զարգացման ժամանակագրությունը: Գրքույկում մանրամասն տեղեկություններ են տրվում Բոլոնիայի գործընթացի առկա վիճակի մասին ինչպես Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում, այնպես էլ Հայաստանում: Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի և Երևանի պետական համալսարանի համատեղ ջանքերով հրատարակվել են <<ECTS-ի իրականացման Եվրոպական և տեղական փորձի համադրական ուսումնասիրություն՝ ՀՀ բարձրագույն կրթության համակարգի միասնական կրեդիտային հենքի մշակման համար>> վերլուծական զեկույցը և <<ՀՀ բուհերում ECTS հենքով կրեդիտային համակարգի ներդրմանն աջակցող օրենսդրական փոփոխությունների և լրացումների վերաբերյալ առաջարկությունները>>: Բոլոնիայի գործընթացի տարբեր ուղղությունների ներդրման առաջընթացի վերաբերյալ պարբերաբար իրականացվում են տարաբնույթ հետազոտություններ, մշակվում են ուղեցույցներ ու մեթոդական ձեռնարկներ:

23. ՀՀ ԿԳ նախարարության նախաձեռնությամբ պարբերաբար կազմակերպվում են սեմինար-խորհրդակցություններ, խորհրդաժողովներ, կոնֆերանսներ՝ նվիրված Եվրոպական բարձրագույն տարածքի ստեղծման և Հայաստանի այդ տարածքում ինտեգրման տարբեր հարցերին, որոնց աշխատանքներին մասնակցում են հրավիրված ու ճանաչված փորձագետներ, արտերկրի ներկայացուցիչներ:

### **Բոլոնիայի գործընթացի համանախագահություն**

24. Համաձայն 2009թ.-ի ապրիլին Լյուվենում և Լյուվեն-Լա-Նյուվում Բոլոնիայի անդամ երկրների հանդիպումների ժամանակ կայացված որոշումների՝ 2010թ.-ի հունվարից Բոլոնյան գործընթացը յուրաքանչյուր կիսամյակ (ռոտացիոն սկզբունքով) համանախագահում են Եվրամիության նախագահող երկիրը և ԵԿԿՏ-ի կազմում գտնվող ԵՄ-ի ոչ անդամ մեկ երկիր, որը ԵԿԿՏ-ի կազմում է: Համաձայն այդ որոշման, Հայաստանը Լեհաստանի հետ միասին համանախագահել է Բոլոնյան գործընթացը 2011թ.-ի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը:
25. Իր համանախագահության շրջանակներում ՀՀ ԿԳ նախարարությունը իրականացրել է մի շարք միջոցառումներ: Մասնավորապես, 2011թ.-ի օգոստոսի 9-10-ը Ծաղկաձորում կազմակերպվել է Միջազգային ուսանողական ամառային դպրոց, որը համախմբել է Հայաստանի և ԵԿԿՏ-ի անդամ երկրների ուսանողներին և քննարկել Բոլոնիայի գործընթացին առնչվող մի շարք կարևոր հարցեր:
26. 2011թ.-ի սեպտեմբերի 7-8-ին Երևանում կայացել է Բոլոնիայի հետամուտ խմբի ղեկավար խորհրդի նիստը:
27. 2011թ.-ի սեպտեմբերի 9-10-ը Երևանում ՀՀ ԿԳ նախարարությունը Բոլոնիայի քարտուղարության հետ համատեղ կազմակերպել է «Բարձրագույն կրթության ֆինանսավորում» թեմայով միջազգային համաժողով, որի ընթացքում քննարկվել են բարձրագույն կրթության ֆինանսավորման բարեփոխումների արդի համաշխարհային միտումները և ներկա փուլի հիմնախնդիրները: Համաժողովին մասնակից երկրների կողմից

ներկայացվել է իրենց երկրների փորձը բարձրագույն կրթության ֆինանսավորման ոլորտում: Բոլոնիայի գործընթացի պատմության ընթացքում Հայաստանյան համաժողովն առաջին անգամ միավորել է ԵԲԿՏ-ի անդամ երկրներին՝ քննարկելու բարձրագույն կրթության կարևորագույն հիմնախնդիրներից մեկը՝ ֆինանսավորումը: Այս փաստն արձանագրվել է համաժողովի պաշտոնական գեկույցում, որը տեղակայվել է ԵԲԿՏ-ի կայքում:

28. 2011 թ.-ի դեկտեմբերի 8-9-ը Ադվերանում ՀՀ ԿԳ նախարարությունը Եվրոպական խորհրդի և Ուսանողների եվրոպական միության հետ համատեղ անց է կացրել միջազգային սեմինար՝ «Ուսանողների մասնակցությունը բարձրագույն կրթության կառավարմանը» թեմայով, որի ընթացքում քննարկվել են բարձրագույն կրթության կառավարմանը ուսանողների մասնակցության խնդիրները, հիմնական խոչընդոտները և առաջարկել են լուծումներ:

### **Թուրինի գործընթաց**

29. ԵՄ-ին ինտեգրման գործընթացում ներառված է նաև նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտը, որն ուղղորդվում է Թուրինի գործընթացով:

30. Թուրինի գործընթացի նպատակն է իրականացնել երկրների միջին մասնագիտական և վերապատրաստման ոլորտի բարեփոխումների փաստագրված վերլուծություն, ինչպես նաև օժանդակել երկրներին ոլորտի հիմնախնդիրների, մարտահրավերների և քաղաքականության ձևավորման հարցերում: Թուրինի գործընթացը համակարգվում է ԵՄ-ի Եվրոպական վերապատրաստման հիմնադրամի (ETF-European Training Foundation) կողմից, որը Եվրոպական հանձնաժողովին ներկայացնում է տվյալ երկրին արտաքին աջակցություն ցուցաբերելու առաջարկություններ:

31. Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտի բարեփոխումները Հայաստանում ուղղված են կրթության բովանդակության արդիականացմանը՝ կառավարման արդյունավետության բարձրացմանն ու նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը՝ Եվրոպայում այդ համակարգի զարգացման միտումներին համապատասխան:

32. ԵՄ Բյուջետային աջակցության գործիքի շրջանակում ավարտվել է «2007թ. Գործողությունների ծրագրի ներքո ոլորտային քաղաքականության աջակցության ծրագիրը՝ ուղղված աղքատության կրճատմանը նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈԻ) ոլորտներում բարեփոխումների իրականացման միջոցով» ծրագիրը, որը գնահատվել է բավարար: Մասնավորապես, այս ծրագրի շրջանակում սկսված բարեփոխումներն ուղղորդելու նպատակով 2008թ.-ին ձևավորվել է «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհուրդը» (ՄԿՈԻ-ԶԱԽ) և ստեղծվել է «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնը» (ՄԿՈԻ-ԶԱԿ): Միաժամանակ, ոլորտում սկսված բարեփոխումների շրջանակում քաղաքականության և ռազմավարության մշակման և դրանց իրականացմանն ուղղված աշխատանքների համակարգման նպատակով 2008թ.-ին ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության կառուցվածքում ստեղծվել է մասնագիտական կրթության և ուսուցման քաղաքականության մշակման և ռազմավարության բաժինը: ԵՄ-ի կողմից Հայաստանին տրվող բյուջետային աջակցության գործիքի շրջանակում 2011 թ.-ից իրականացման փուլում է «Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈԻ) բարեփոխման շարունակության և զբաղվածության հայեցակարգի մշակում» 2-րդ ծրագիրը:

33. 2009-2011 թվականների ընթացքում ՄԿՈԻ-ԶԱԿ-ի կողմից համակարգվող աշխատանքների շրջանակում մշակվել են արհեստագործական և միջին մասնագիտական կրթության 100 մասնագիտությունների և որակավորումների պետական կրթական չափորոշիչներ, որոնց հիման վրա վերանայվել են ուսումնական ծրագրերը: Այս աշխատանքները շարունակվում են նաև ներկայումս: Բացի այդ, կազմակերպվել են «Կարողությունների ձևավորմանը միտված



մոդուլային ուսումնական ծրագրերով ուսումնառության գործընթացի կազմակերպումը և իրականացումը» թեմայով վերապատրաստման դասընթացներ, որոնց շրջանակներում տարեկան վերապատրաստվել են են արհեստագործական ուսումնարանների և քոլեջների ավելի քան 1000 դասախոսներ և արտադրական ուսուցման վարպետներ: Աշխատանքներ են իրականացվել նաև վարչական պատասխանատուների վերապատրաստման ուղղությամբ: Վերապատրաստվել են արհեստագործական ուսումնարանների և քոլեջների տնօրեններ և փոխտնօրեններ: Բարեփոխումների շրջանակում ընտրվել են 12 բազմագործառնության քոլեջներ, որտեղ իրականացվել են շինվերանորոգման լայնածավալ աշխատանքներ, և դրանք վերազինվել են ժամանակակից սարքավորումներով և գույքով:

34. ՀՀ կառավարության 2011թ.-ի հոկտեմբերի 27-ի N1550-Ն որոշմամբ հիմնադրվել է «Ուսուցման ազգային հիմնադրամը», ձեռնարկվել է ՄԿՈԻ պետական հաստատությունների ցանցի օպտիմալացման ծրագիր, որի արդյունքում ՀՀ պետական քոլեջների թիվը նվազել է 10 տոկոսով: Ընտրված 12 բազմագործառնության քոլեջները վերակազմակերպվել են տարածաշրջանային կենտրոնների:
35. Կարևոր քայլեր են ձեռնարկվում նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում սոցիալական գործընկերության խթանման և մասնագիտական կրթության և գործատուների միջև կապերի ամրապնդման ուղղությամբ: Ներկայումս մի շարք գործատուներ գործուն մասնակցություն են ցուցաբերում ուսումնական հաստատությունների աշխատանքներին, մասնավորապես աջակցում են սովորողների գործնական ուսուցման ապահովմանը, տրամադրում խորհրդատվական և նյութական աջակցություն, իսկ լավագույն շրջանավարտներին հաճախ ապահովում աշխատատեղերով: Մակայն սոցիալական գործընկերության այս մակարդակը դեռևս բավարար չէ և դրա հետագա զարգացումը և ամրապնդումը ժամանակի հրամայական է:

### Շարունակական կրթություն

36. Եվրոպական համագործակցության, Բոլոնիայի և Թուրինի գործընթացի կարևոր ուղղություններից է լրացուցիչ և շարունակական կրթությունը, որի ուղղությամբ ՀՀ ԿԳ նախարարության կողմից համակարգված աշխատանքները սկսվել են համեմատաբար վերջերս: 2010թ.-ին ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմում ստեղծվել է լրացուցիչ և շարունակական կրթության բաժինը ոլորտի համակարգման, խնդիրների լուծման, ոլորտի շարունակական զարգացմանն ուղղված աշխատանքներն ապահովելու նպատակով:
37. Ներկայումս իրականացվում են «ՀՀ լրացուցիչ և շարունակական կրթության մասին ազգային զեկույցի» մշակման աշխատանքները, որում ներգրավված են նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, լրացուցիչ և շարունակական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունները, «Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» հասարակական կազմակերպությունը, «ԴՎՎ ինթերնեյշնլ»-ը՝ Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտը և համապատասխան ոլորտի հետ առնչություն ունեցող այլ շահագրգիռ մարմիններ:
38. «ՀՀ լրացուցիչ և շարունակական կրթության մասին ազգային զեկույցի» մշակման աշխատանքների ավարտին կհետևի օրենսդրության կատարելագործման ապահովող իրավական ակտերի մշակման գործընթացը՝ ապահովելու ոլորտի համակարգումը և հետագա զարգացումը:

### Միջպետական և միջազգային համագործակցություն

39. ՀՀ կրթության և գիտության նախարարությունը ակտիվ աշխատանքներ է ծավալում ԵՄ-ի տարբեր երկրների միջև կրթության և գիտության ոլորտներում միջպետական համագործակցությունն ընդլայնելու նպատակով: Ներկայումս ՀՀ կրթության և գիտության ոլորտներում համագործակցության ուղղությամբ միջպետական պայմանագրեր են կնքված շուրջ 20 եվրոպական երկրների հետ: Աշխատանքներ են տարվում այդ երկրների ցանկը մեծացնելու ուղղությամբ: Միջպետական պայմանագրերը մեծապես նպաստում են ուսանողների, դասախոսների և գիտական աշխատողների շարժունությանը, ուսումնական հաստատությունների միջև գործնական կապերի ստեղծմանը և այլն:
40. Բարձրագույն կրթության ոլորտում տրանսեվրոպական համագործակցության սխեմա է ԵՄ-ի Տեմպուս (Tempus) ծրագիրը, որի նպատակն է նպաստել Եվրոպայի նոր անկախ պետությունների բարձրագույն կրթական համակարգերի և մասնավորապես մարդկային ռեսուրսների զարգացմանը, ինչպես նաև խթանել համագործակցությունը այդ երկրների բարձրագույն կրթական հաստատությունների միջև: Տեմպուսի ծրագրերում Հայաստանի բարձրագույն կրթական հաստատությունները ներգրավված են ավելի քան տասը տարի:
41. ՀՀ կրթության և գիտության նախարարությունը վերջին տարիների ընթացքում ակտիվորեն ընդգրկվում է նաև ՀՀ-ԵՄ համագործակցության նոր ծրագրերում: Մասնավորապես, Հայաստանը ներգրավված է Էրազմուս Մունդուս ծրագրում, որի նպատակն է ընդլայնել և զարգացնել շարժունության հնարավորությունները ԵՄ երկրների և Հայաստանի Հանրապետության համալսարանների միջև, ինչպես նաև բարձրացնել բարձրագույն կրթական հաստատությունների դասավանդող կազմի և ուսանողների որակավորումը և փորձառությունը:
42. Վերջին երկու տարիների TWINING և TAIEX գործիքների կիրառման գործընթացում ՀՀ ԿԳ նախարարությունը հանդես է եկել մի քանի ծրագրային առաջարկներով, որոնք ընդգրկել են մասնագիտական կրթության ոլորտում առկա հիմնախնդիրները և նպատակաուղղված են մասնագիտական կրթության ոլորտում եվրոպական չափանիշների ներդրմանը: 2010 թ.-ին ՀՀ կրթության և գիտության նախարարությունը իրականացրել է երեք TAIEX ծրագրեր՝ նվիրված բարձրագույն կրթության որակի ապահովման և բժշկական շարունակական կրթության հիմնախնդիրներին, որոնց մասնակցել են պետական և ոչ պետական բուհերի ներկայացուցիչներ և եվրոպական փորձագետներ: Միաժամանակ, բարձրագույն կրթության որակավորումների շրջանակի մշակման և ներդրման նպատակով ներկայացվել և հաստատվել է TWINING ծրագրային առաջարկը: 12011թ.-ին մշակվել և հաստատվել են ևս երկու TAIEX ծրագրային առաջարկներ՝ մասնագիտական կրթության ոլորտում Եվրոպասի (Euro-pass) ներդրման նպատակով և լրացուցիչ և շարունակական կրթության գծով: Ծրագրային առաջարկների շրջանակում նախատեսվում է ինչպես եվրոպական փորձագետների այցելություններ Հայաստան, այնպես էլ ուսուցողական այցեր եվրոպական որևէ երկիր՝ փորձի ուսումնասիրման նպատակով: 2012թ.-ի ընթացքում նախատեսվում է նաև ներկայացնել «Լեզվական քաղաքականության հիմնախնդիրներ» և «Կրթական ծրագրերի ազգային դասակարգչի և կրթության ոլորտի վիճակագրական ցուցանիշների համապատասխանեցում եվրոպական չափանիշներին» TAIEX ծրագրային առաջարկները:

### **Եվրոպայի բարձրագույն կրթությունը նոր տասնամյակում**

43. 2010թ.-ից Եվրոպական բարձրագույն կրթության տարածաշրջանի (ԵԲԿՏ) ստեղծման գործընթացը թևակոխել է զարգացման նոր փուլ: 2009թ.-ին Լյուվենում, ինչպես նաև 2010թ.-ին Բուդապեշտում և Վիեննայում տեղի ունեցան Բոլոնիայի գործընթացի անդամ երկրների կրթության նախարարների գագաթաժողովները, ընդունվեցին նոր փաստաթղթեր, այդ թվում Լյուվենի հռչակագիրը՝ «Բոլոնիայի գործընթացը-2020, Եվրոպայի բարձրագույն կրթությունը նոր տասնամյակում»:
44. 2010թ.-ի նախարարական գագաթաժողովը հայտարարեց 1999թ.-ի Բոլոնիայի հռչակագրով նպատակադրված Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (ԵԲԿՏ) պաշտոնական

մեկնարկը: Եթե մինչև 2010թ.-ը Բոլոնիայի գործընթացի հիմնական նպատակը Եվրոպական Բարձրագույն կրթական տարածքի ստեղծումն էր, ապա ԵԲԿՏ աշխատանքային ծրագիրը 2010թ.-ից ներառում է հետևյալ առաջնահերթ ուղղությունները.

- 1) Մոցիալական ուղղվածություն,
- 2) Շարժունություն,
- 3) Շարունակական կրթություն,
- 4) Զբաղվածունակություն,
- 5) Որակավորումների շրջանակներ,
- 6) Կրթություն, հետազոտություն և նորարարություն,
- 7) Ֆինանսավորում,
- 8) Որակի ապահովում,
- 9) Փոխճանաչում,
- 10) Թափանցիկության գործիքներ,
- 11) Ուսանողակենտրոն ուսուցում:

45. Ներկայումս ԵԲԿՏ-ն ներառում է 47 անդամ երկիր, այդ թվում Հայաստանը և 8 խորհրդատու անդամներ, որոնք են՝

- 1) Եվրոպայի խորհուրդը (Council of Europe),
- 2) Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը (UNESCO),
- 3) Ուսանողների եվրոպական միությունը (ESU),
- 4) <<Միջազգային կրթություն>> կազմակերպությունը (EI),
- 5) Եվրոպական համալսարանական ասոցացիան (EUA),
- 6) Բարձրագույն կրթության հաստատությունների Եվրոպական ասոցացիան (EURASHE),
- 7) Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիան (ENQA),
- 8) <<Եվրոպական բիզնես>> կազմակերպությունը (BUSINESSEUROPE):

#### **Գ. Ներկա փուլի հիմնախնդիրները և մարտահրավերները**

46. Չնայած ՀՀ ԿԳ նախարարության կողմից իրականացված մեծածավալ աշխատանքներին, ՀՀ կրթական համակարգի ԵՄ-ի հետ ինտեգրման գործընթացում դեռևս առկա են բազմաթիվ հիմնախնդիրներ և մարտահրավերներ: Իրականացված փոփոխություններն ունեն հետագա զարգացման ու կատարելագործման անհրաժեշտություն և իրենց հիմնական շահառուներին՝ ուսանողներին, դասախոսներին և գործատուներին, ուղղակիորեն հասնելու անհրաժեշտություն: Այսօր առաջնային է ուսանողների, դասախոսների և գործատուների առավելագույն ներգրավումը Բոլոնիայի գործընթացի հետագա զարգացումներում և խիստ կարևոր է նորաստեղծ կառույցների և գործընթացների ու ընթացակարգերի ամբողջական ընկալումը և ընդունումը ինչպես համալսարանական հանրության՝ ուսանողների, դասախոսների, վարչական և ղեկավար կազմի, այնպես էլ հասարակության լայն խավերի կողմից:

47. Ներկա փուլի հիմնախնդիրների և մարտահրավերների թվում կարևոր է առանձնացնել հետևյալ ուղղությունները.

1) Բարձրագույն կրթության հավասար մատչելիություն հասարակության բոլոր խավերի համար և բարձրագույն կրթության մեջ ընդհանուր ընդգրկվածության աճ. Չնայած այն հանգամանքին, որ վերջին տասնամյակում բարձրագույն կրթության ընդգրկվածությունը Հայաստանում զգալիորեն աճել է (գրեթե 50%-ով) հասնելով մոտ 30%-ի, այն դեռևս ցածր է միջին եվրոպական ցուցանիշից: Արևմտյան Եվրոպայի երկրներում բարձրագույն կրթության մեջ ընդհանուր ընդգրկման ցուցանիշը կազմում է 45%-ից 50%, իսկ Շվեդիայում և Նորվեգիայում այն կազմում է 65%: Հայաստանում կարևոր հիմնախնդիր է նաև բարձրագույն կրթության մատչելիությունը հասարակության տարբեր խավերի համար: Մասնավորապես, ցածր եկամուտ ունեցող և գյուղական բնակավայրերից ընտանիքների երեխաների բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունները շատ ավելի սահմանափակ են, քան բարեկեցիկ և քաղաքաբնակ ընտանիքների երեխաներինը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 2009թ.-

ին ՀՀ բուհերի ուսանողների միայն 6.9%-ն են ներկայացել որպես ամենացածր եկամտային խմբում ընդգրկված ընտանիքի անդամներ, մինչդեռ ուսանողների 32%-ը ամենաբարձր եկամտային խմբի ընտանիքներից են: Այսպիսով, բարձրագույն կրթության մեջ ընդհանուր ընդգրկվածության աճը և մատչելիության ապահովումը կարևոր մարտահրավեր է, ինչը նաև ԵԲԿՏ-ի նոր տասնամյակի գործողությունների ծրագրի հիմնական ուղղություններից (սոցիալական) մեկն է:

2) Ֆինանսավորման ծավալների աճ և ֆինանսավորման մեխանիզմների արդիականացում.

ա. Հայաստանում բարձրագույն կրթության գծով պետական ծախսերը 2006-2010թթ. ընթացքում տատանվել է ՀՆԱ-ի 0.15%-ից 0.27%-ի միջև: Եռաստիճան բարձրագույն կրթական համակարգի վրա պետական ծախսերը Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ-OECD) երկրներում կազմում է միջինում 1%: Մասնավոր միջոցները, որոնք հատկացվում են բարձրագույն կրթությանը Հայաստանում ուսման վարձերի ձևով, 2006-2010թթ. ընթացքում կազմել են ՀՆԱ-ի 0.54%-ից 0.64%-ը: ՏՀԶԿ երկրներում բարձրագույն կրթության համակարգ ուղղվող մասնավոր միջոցները կազմում են ՀՆԱ-ի մոտ 0.5%-ը: Հետևաբար ՏՀԶԿ երկրներում բարձրագույն կրթության ոլորտին հատկացվող պետական միջոցները գրեթե երկու անգամ գերազանցում են մասնավոր ներդրումները, միչդեռ Հայաստանում դրանք մոտ 2.5-3 անգամ փոքր են մասնավոր ներդրումների նկատմամբ:

բ. Թեև Հայաստանում անցում է կատարվել պետպատվերի համակարգից ուսանողական նպաստների համակարգի, այնուհանդերձ բարձրագույն կրթության ֆինանսավորման մեխանիզմը հիմնականում հիմնված է մուտքերի, այլ ոչ թե ուսման արդյունքների վրա: Այլ կերպ ասած, ֆինանսավորման հիմքում ընկած է բուհերի ուսանողների թիվը, այլ ոչ թե համապատասխան գիտելիքների պաշար և հմտություններ ունեցող շրջանավարտների թիվը: Աշխատաշուկայում մասնագետների պահանջարկը, տնտեսության զարգացման առաջնային ուղղությունները և ուսանողների ընտրությունը աննշան դեր են խաղում բարձրագույն կրթության ֆինանսավորման գործող համակարգում: Մասնագիտացման քվոտաները խնդրահարույց են և ունեն կառավարության կողմից կարգավորման բարձր աստիճան:

գ. Էական հիմնախնդիր է նաև բուհերի ներքին արդյունավետությունը: Հայաստանում ուսանող/դասախոս հարաբերության միջին ցուցանիշը կազմում է 9.4, միչդեռ ՏՀԶԿ երկրներում այդ ցուցանիշը միջինում կազմում է 15:

դ. Հարկավոր է նշել նաև, որ Հայաստանում <<անվճար>> տեղերը հասանելի են ուսանողների շատ փոքր մասին (մոտ 10-15%-ին), իսկ ուսանողներին հատկացվող ֆինանսական աջակցության ձևերը և ծավալները խիստ սահմանափակ են: Հայաստանում ըստ էության չեն գործում այլ երկրներում լայնորեն կիրառվող ուսանողական վարկերի, դրամաշնորհների և այլ մեխանիզմները:

ե. Այսպիսով, բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի բարեփոխումը, ներառյալ՝ բուհերի ֆինանսավորման աղբյուրների և մեխանիզմների դիվերսիֆիկացիան, ուսանողների ֆինանսական աջակցության պետական ծրագրերի հասցեականության և արդյունավետության բարելավումը, ուսանողների ֆինանսական աջակցության ծավալների և ձևերի ընդլայնումը, բարձրագույն կրթության պետական ֆինանսավորման ծավալների ավելացումը, բարձրագույն կրթության և գործարար միջավայրի համագործակցության խթանումը և բարձրագույն կրթության մեջ մասնավոր ներդրումների խրախուսումը, կարևոր մարտահրավեր է: Բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի բարեփոխումը նաև ԵԲԿՏ-ի նոր տասնամյակի գործողությունների ծրագրի հիմնական ուղղություններից է:

3) Փոխձանաչման գործընթացի և շարժունության խթանում.

ա. Հայաստանում միջին և բարձրագույն ուսումնական հաստատությունների սովորողների, դասախոսների և գիտական աշխատողների շարժունությունը ինչպես ներքին՝ մեր երկրի հաստատությունների միջև, այնպես էլ արտաքին, խիստ սահմանափակ է, ինչի հիմնական պատճառներն են անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների պակասը, ոչ ճկուն ուսումնական ծրագրերը, եվրոպական չափայնությամբ և մասնակցությամբ համատեղ ծրագրերի պակասը, ակադեմիական կրեդիտների փոխանցման և փոխձանաչման մեխանիզմների ու դրանց իրավական հիմքերի անկատարությունը: Արտաքին շարժունությունը ՀՀ-ում հիմնականում

ապահովվում է միջպետական համաձայնագրերի և <ERASMUS MUNDUS> ծրագրի շրջանակներում, որոնք բավարար չեն:

բ. Այսպիսով փոխձանաչման գործընթացի և մեխանիզմների իրավական կարգավորումը Լիսաբոնի ձանաչման կոնվենցիայի սկզբունքներին համապատասխան, ինչպես նաև շարժունության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և վերջինիս ընդլայնումը ներկա փուլի կարևորագույն խնդիրներից է թե Հայաստանում, թե ԵԲԿՏ-ի բոլոր երկրներում:

4) Մասնագիտական կրթության և աշխատաշուկայի պահանջների համապատասխանություն, շրջանավարտների զբաղվածունակության խթանում.

ա. Վերջին տարիներին զբաղվածության և մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների աշխատանքի տեղավորման հնարավորությունները փոքր-ինչ բարելավվել են, սակայն շրջանավարտների մասնագիտացման ու աշխատաշուկայի պահանջների միջև անհամապատասխանությունն ակնհայտ է: Համաձայն Ազգային վիճակագրության ծառայության տվյալների 20-29 տարեկանների տարիքային խմբի շրջանում գործազրկությունն ամենաբարձրն է հանրապետությունում: Շրջանավարտների աշխատանքի տեղավորման հնարավորությունները գնահատվում են 30%-ից ցածր, իսկ նրանց աշխատավարձերը միայն չնչին չափով են գերազանցում գործազուրկների նպաստի չափը:

բ. Գործատուների և ուսումնական հաստատությունների միջև գործնական կապերը թույլ են, գործատուների մասնակցությունը մասնագիտական կրթությանը փոքր է:

գ. Մասնագիտական կրթության որակավորումների և կրթական վերջնարդյունքների վերաբերյալ գործատուների իրազեկության բարձրացումը, ուսանողների և շրջանավարտների համար կարիերայի և աշխատատեղերի որոնման աջակցության ծառայությունների որակի ու մատչելիության բարելավումը, գործատուների և ուսումնական հաստատությունների միջև գործնական կապերի ամրապնդումը կարևոր խնդիր են և ԵԲԿՏ-ի հետագա զարգացման ուղղություններ են:

5) Որակավորումների ազգային շրջանակի ներդրում.

ա. ՀՀ կրթության որակավորումները և դրանց համապատասխան ընդհանրական բնութագրերը սահմանվել են ՀՀ-ի կրթության որակավորումների ազգային շրջանակում՝ համաձայն Եվրոպական որակավորումների շրջանակի, ինչը հանդիսանում է ԵԲԿՏ-ի զարգացման հիմնական գործիքներից մեկը:

բ. Սակայն որակավորումների շրջանակի հաստատումը միայն առաջին քայլն է այդ գործընթացում: Հայաստանի կրթական որակավորումների ազգային շրջանակից բխող գործողությունների իրականացումը և վերջինիս ինքնահավաստագրման գործընթացի իրականացումը ՀՀ ԿԳ նախարարության առաջնահերթ մարտահրավերներից է: Բոլոր մասնագիտությունների բակլավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերի բովանդակության համադրման և ներդաշնակեցման անհրաժեշտությունն ևս կա:

6) Բարձրագույն կրթության և գիտահետազոտական աշխատանքների ինտեգրում.

ա. Հայաստանում գիտահետազոտական աշխատանքները բաժանված են 3 տիպի կազմակերպությունների միջև, մասնավորապես՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան իր գիտահետազոտական ինստիտուտներով, ոլորտային նախարարությունների գիտահետազոտական ինստիտուտները և բուհերը:

բ. Այսպիսի կառուցվածքը և, հետևաբար, մասնատված ֆինանսավորումը, չի նպաստում գիտահետազոտական աշխատանքների գծով պետական ծախսերի արդյունավետության բարձրացմանը: Մյուս կողմից, մասնատվածությունը, ինչպես նաև ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների ավանդական տարանջատումը նվազեցնում է ինչպես ուսումնական գործընթացի, այնպես էլ գիտահետազոտական աշխատանքների որակը բուհերում:

գ. ԵԲԿՏ-ի բոլոր երկրներում և Հայաստանում բուհերի զարգացման օրակարգային խնդիր է բարձրագույն կրթական ծրագրերում, հատկապես մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերում հետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացումը և դրանով իսկ բարձրագույն կրթության որակի բարձրացմանը նպաստելը:

7) Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի կատարելագործում.

ա. ՀՀ միջին և բարձրագույն մասնագիտական կրթության համար առաջնահերթ խնդիր է ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի լիարժեք ներդրումը և դրա ճշգրիտ օգտագործումը՝ կրեդիտային կառուցվածքով ձևով ծրագրերի ստեղծման համար: Բուհերում դեռևս առկա են խնդիրներ կապված կրեդիտների կուտակման և փոխանցման ընթացակարգերի կիրառման հետ, մասնավորապես, խնդրահարույց են մնում կրեդիտների հաշվարկը և շնորհումը՝ համապատասխան ծրագրային միավորների կրթական վերջնարդյունքների ու ուսանողական լրիվ աշխատաբեռի հիման վրա, նախորդող ուսումնական շրջաններում և միջբուհական շարժունության ծրագրերում ուսանողների կուտակված կրեդիտների անարգել ճանաչումը բուհերի կողմից և այլն:

բ. Իրականացված կառուցվածքային փոփոխությունները և կրեդիտների ներդրումը բուհերում չեն ուղեկցվել կրթական ծրագրերի բովանդակային փոփոխություններով, ինչը ևս ներկա փուլի կարևոր հիմնախնդիրներից է:

գ. Հեռանկարային խնդիր է նաև կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի ներդրումը միջին մասնագիտական համակարգում:

8) <<ԵԲԿՏ-ի որակի ապահովման չափանիշներին և ուղեցույցներին>> համապատասխան մասնագիտական կրթության որակի ապահովման ներքին համակարգերի ներդրման և հավատագրման գործընթացների իրականացում:

ա. ՀՀ բուհերի մեծ մասում այս կամ այն չափով ներդրված են որակի ապահովման ներբուհական մեխանիզմները և ստեղծված են համապատասխան միավորներ, սակայն կան բուհեր, որոնցում դրանք դեռևս չեն գործում: Հարկ է նշել, որ անգամ այն բուհերում, որտեղ ստեղծված են համապատասխան միավորները և սկսվել է որակի ապահովման մեխանիզմների կիրարկումը, դրանք դեռևս սկզբնական փուլում են և ամբողջապես չեն համապատասխանում ԵԲԿՏ-ի որակի ապահովման չափանիշներին, ինչը խոչընդոտում է ԵԲԿՏ-ի պահանջներին համապատասխան բուհերի ենթակառուցվածքային և ծրագրային հավատարմագրման գործընթացի իրականացմանը:

բ. Միջին մասնագիտական հաստատություններում որակի ներքին ապահովման գործընթացները դեռևս սկսված չեն:

գ. ՀՀ միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում որակի ապահովման ներքին համակարգերի ձևավորումը կամ դրանց հետագա զարգացումը ներկա փուլի առանցքային հիմնախնդիրներից է, քանի որ ուսումնական հաստատություններն են կրում առաջնային պատասխանատվություն կրթության որակի համար: Հայաստանի բուհերի և տրված որակավորումների ու դիպլոմների ճանաչման, շարժունության խթանման, կրթության որակի բարձրացման տեսանկյուններից առավել կարևոր նշանակություն ունի նաև բուհերի արտաքին գնահատման և հավատագրման գործընթացների իրականացումը Մասնագիտական կրթության Որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի (ՈԱԱԿ)-ի կողմից:

դ. ՈԱԱԿ-ն իր հերթին պետք է անցնի արտաքին գնահատում <<Որակի ապահովման եվրոպական ցանցի>> (ENQA) կողմից՝ եվրոպական պահանջներին իր ընթացակարգերի համապատասխանության տեսանկյունից և միայն դրանից հետո այն կարող է դառնալ այդ ցանցի լիիրավ անդամ: Անդամակցումը <<Որակի ապահովման եվրոպական ցանցին>> կարող է ապահովել ինչպես ՈԱԱԿ-ի ճանաչումը ԵԲԿՏ-ի երկրներում, այնպես էլ Հայաստանյան հավատագրման գործընթացի հուսալիությունը:

9) Ուսանողակենտրոն ուսուցման խթանում, բուհերի կառավարման և ակադեմիական գործընթացներում ուսանողների մասնակցության բարձրացում:

ա. Հայաստանյան բուհերում դեռևս գերակշռում են ուսուցման ավանդական մեթոդները, որոնք չեն խրախուսում ուսանողների ինքնուրույն աշխատանքի, վերլուծական մտածողության և անհրաժեշտ որակների ձևավորումը: Չնայած օրենսդրական հիմքերի առկայությանը, ուսանողների իրական մասնակցությունը բուհերի կառավարման և ակադեմիական գործընթացներին բավարար չէ: Միջազգային ուսանողական կառույցների հետ հայաստանյան ուսանողական կառույցների կապերը թույլ են, իսկ դրանց աշխատանքներին հայաստանյան ուսանողները դեռևս չեն մասնակցում:

բ. ԵԲԿՏ-ում առանձնահատուկ կարևորություն է տրվում ուսանողակենտրոն ուսուցման խթանմանը, բուհերի կառավարման և ակադեմիական գործընթացներում ուսանողների

մասնակցության բարձրացմանը, ուսանողական կառույցների միջազգային համագործակցությանը: Ուստի Հայաստանում այս ուղղությամբ աշխատանքները շարունակում են մնալ օրակարգային խնդիր:

10) Նախնական և միջին մասնագիտական կրթության և շարունակական կրթության համակարգերի զարգացում:

ա. Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում առկա մարտահրավերներ են կրթության բովանդակության արդիականացումը ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցումը, կառավարման արդյունավետության բարձրացումը, նյութատեխնիկական բազայի ամրապնդումը ու նոր տեխնոլոգիաների ներմուծումը կրթական գործընթաց և այլն: Գործատուների մասնակցության և սոցիալական գործընկերության մակարդակը ոլորտում դեռևս բավարար չէ և դրա հետագա զարգացումը և ամրապնդումը ևս արդի խնդիրներից է:

բ. Շարունակական կրթության խնդիրները ինչպես Եվրոպայում, այնպես էլ Հայաստանում գնալով դառնում են առաջնային: Շարունակական կրթության տեսանկյունից խիստ անհրաժեշտ է աջակցել զբաղվածների մասնագիտական որակավորման անընդհատ բարձրացմանը՝ նրանց համար որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպման միջոցով և աջակցել անհատներին կատարելագործելու իրենց հմտությունները՝ “ողջ կյանքի ընթացքում ուսումնառության” սկզբունքներին համապատասխան:

գ. Հայաստանում նախնական և միջին մասնագիտական, ինչպես նաև շարունակական կրթության ոլորտի զարգացումները պետք է իրականացվեն Եվրոպայում այդ ոլորտների զարգացման միտումներին՝ Բոլոնիայի և Թուրինի գործընթացներին համապատասխան:

## **Դ. Ծրագրի նպատակը և խնդիրները**

48. Սույն ծրագրի նպատակն է ապահովել Հայաստանի միջին և բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի հետագա զարգացումը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի նոր փուլի՝ 2010-2020թթ. նպատակներին համահունչ:

1) Այդ նպատակի իրագործման խնդիրներ են՝

ա. շարունակել բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումները՝ ԵԲԿՏ գործնական ծրագրի ուղղություններին համապատասխան,

բ. խորացնել միջին մասնագիտական ոլորտի բարեփոխումները Թուրինի գործընթացի համատեքստում,

գ. ընդլայնել ԵՄ-ի և ԵԲԿՏ-ի անդամ երկրների հետ երկկողմ և բազմակողմ համագործակցությունը և ԵՄ աջակցության գործիքներին և ծրագրերին մասնակցությունը,

դ. ընդգրկվել ԵՄ-ի հանրակրթության ոլորտի նոր սկսվող ծրագրերում:

**Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Ց Ց**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

	Ուղղությունը	Նպատակը	Գործողությունը	Ակնկալվող արդյունքը	Գնահատման ցուցանիշները	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը	Կատարողը
1.	Որակավորումների ազգային շրջանակ	Որակավորումների եվրոպական շրջանակին (ՈԱՇ) համադրելի ազգային շրջանակի ներդնում	<p>Ինքնահավաստագրման գործընթացի կազմակերպում:</p> <p>Որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստագրման զեկույցի պատրաստում:</p>	<p>Որակավորումների միասնական համակարգը ներդրված է:</p> <p>Դեպի աշխատաշուկա ելք ունեցող մասնագետների որակավորումների իրավական և ինստիտուցիոնալ դաշտը կարգավորված է:</p>	<p>ՀՀ բարձրագույն կրթության մասնագիտությունների համադրելիություն</p>	<p>2012թ.</p> <p>2012թ.</p>	<p>Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում</p> <p>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ</p>	<p>ՀՀ ԿԳՆ</p>



			<p>ՀՀ մասնագիտությունների կրթական չափորոշիչների համապատասխանեցում ՈԱՇ-ի կրթական վերջնարդյունքներին՝ նկարագրելով կրթական ծրագրերը ՈԱՇ-ի մակարդակների ընդհանրական բնութագրիչներով:</p> <p>Բարձրագույն, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների նոր ցանկի հաստատում:</p>	<p>Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և բարձրագույն կրթության կրթական չափորոշիչները վերանայված են և հաստատված:</p>	<p>Հաստատված են նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և կրթական չափորոշիչների թիվը:</p>	<p>2012-2013թթ.</p> <p>2012թ.</p>		
2.	<p>ՀՀ կրթական համակարգի միջազգայնացում և շարժունություն</p>	<p>Ուսանողների, գիտական աշխատողներ, բուհական անձնակազմի շարժունության ապահովում</p>	<p>Շարժունության եվրոպական ծրագրերին Հայաստանի ընդգրկման ընդլայնում՝ միջբուհական և միջպետական մակարդակներում:</p>	<p>Միջբուհական և միջպետական շարժունությունն ընդլայնված է:</p>	<p>Կրթական ծրագրերի համադրելիության աստիճան</p>	<p>2012-2020թթ.</p>	<p>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ</p>	<p>ՀՀ ԿԳՆ</p>

			<p>Բոլոնիայի գործընթացով առաջադրված շարժունության տարբեր ձևերի ներդրում և բուհերի կրթական ծրագրերում որոշակի ժամանակահատվածով (օրինակ՝ մեկ կիսամյակ կամ մեկ տարի) շարժունության՝ &lt;&lt;շարժունության պատուհանի&gt;&gt;, հնարավորության նախատեսում:</p> <p>Շարժունության ազգային ցուցանիշի բարձրացում՝ ձգտելով հասնել Բոլոնիայի 20% շարժունության ցուցանիշին:</p> <p>Շարժունության ծրագրերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացում:</p>		<p>Ուսանողների շարժունության տոկոս</p> <p>Դասախոսների շարժունության տոկոս</p>	<p>2013-2020թթ.</p> <p>2012-2020թթ.</p>	<p>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ</p> <p>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ</p>	
--	--	--	---	--	---	---	---	--

						2012-2020թթ.		
3.	Որակավորումների փոխճանաչում	Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի սկզբունքների իրականացում ՀՀ-ում	Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի սկզբունքներին համապատասխան որակավորումների (դիպլոմների, վկայականների և այլն) ճանաչմանն ուղղված ՀՀ օրենսդրության լրամշակում:  Բուհերի կողմից ճանաչման ընթացակարգերի մշակում:  Համատեղ աստիճանների ճանաչման վերաբերյալ օրենսդրական դաշտի լրամշակում:	Օտարերկրյա բուհերի հետ համատեղ կրթական ծրագրերը ներդրված են:  Ճանաչման օրենսդրական դաշտը բարելավված է և բուհերում ներդրված են ճանաչման գործիքները և ընթացակարգերը	Կրթական վերջնարդյունքները ամրագրող փաստաթղթերի համապատասխանություն միջազգային պահանջներին	2013-2015թթ.  2012-2014թթ.	ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ  Լրացուցիչ Ֆինանսավորում չի պահանջում	ՀՀ ԿԳՆ,  ՀՀ բուհեր, ԱՓՇՍՏԿ

			<p>Դիպլոմի միասնական հավելվածի ներդրում բուլոբ բուհերում;</p> <p>Բուհերում դիպլոմի միասնական հավելվածի, կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի ներդրման պարբերական մոնիտորինգի կազմակերպում և բարելավում:</p> <p>Լիսաբոնի ճանաչման կոնվենցիային համապատասխան տրանսազգային կրթության տրամադրման ազգային կանոնակարգերի մշակում և բարելավում:</p> <p>Կանոնակարգվող մասնագիտությունների համար վարույթային դաշտի ապահովում:</p>			<p>2013-2014թթ</p> <p>2012-2013թթ.</p> <p>2012-2020թթ.</p>		
--	--	--	--	--	--	--	--	--

						2013- 2015թթ.		
						2015-2020թթ.		
4.	Մասնագիտական կրթության որակի ապահովում	Մասնագիտական կրթության որակի ապահովման մշակույթի ձևավորում, եվրոպական չափորոշիչների համապատասխան կրթական ծառայությունների որակի բարելավում, ՀՀ ԲԿ կրթական համակարգի ճանաչում միջազգային	ՀՀ բոլոր բուհերի կողմից որակի ապահովման ներքին համակարգերի ձևավորում  Որակի ապահովման քաղաքականության չափանիշների, չափորոշիչների, և ընթացակարգերի մշակում և կիրառում:  Բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձարկում	Որակի ներքին և արտաքին համակարգը ներդրված է:  Մասնագիտական ուսումնական հաստատությունների ծրագրային և ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը սկսված է:	Դասախոսների մասնագիտա կան որակավորում ների բարձրացման աստիճան  Ծրագրային և ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած բուհերի թիվը	2012-2014թթ.          2012 - 2014 թթ	ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ       ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	ՀՀ ԿԳՆ       ՈԱԱԿ       ՀՀ բուհեր

		մակարդակում:	<p>ՄՈՒՀ-երի որակի ապահովման ներքին համակարգերի ձևավորում</p> <p>Մասնագիտական կրթության մակարդակում ուսումնական հաստատությունների և մասնագիտական կրթական ծրագրերի հավատարմագրում:</p> <p>ՈԱԱԿ-ի արտաքին գնահատում և ճանաչում ԵՄ երկրների և կազմակերպությունների կողմից:</p>			<p>2012-2014թթ.</p> <p>2012-2015թթ.</p> <p>2013թթ-ից սկսած</p> <p>2014-2016թթ.</p>		
5.	Սոցիալական ուղղվածություն	Հասարակության բոլոր խմբերի համար բարձրագույն մասնագիտական	Բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի սոցիալական աջակցության	Ապահովված են սոցիալական երաշխիքները և բարձրացված է ԲԿ մատչելիությունը հասարակության տարբեր խմբերի համար	ԲԿ-ում սոցիալական տարբերի խմբերի ընտանիքներից ուսանողների ընդգրկվածության	2012-2014թթ.	ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	ՀՀ ԿԳՆ

	<p>կրթության մատչելիության բարձրացման և նրանց հավասար ներկայացվածության ապահովում՝ սոցիալական երաշխիքների ապահովման միջոցով</p>	<p>քաղաքականության իրականացման նպատակով իրավական դաշտի կատարելագործում:</p> <p>Հասարակության բոլոր խմբերի համար սոցիալական հավասար պայմանների ապահովման նպատակով բարձրագույն կրթության ֆինանսավորման արդյունավետ համակարգի ներդրում:</p> <p>Բարձրագույն կրթության ապահովման նպատակով այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրների ներառում և ձևերի սահմանում</p> <p>Ուսումնառության ընթացքում սովորողների համար սոցիալական</p>	<p>Նպաստների տրամադրման հասցեականությունը բարձրացված է</p>	<p>տոկոսը</p> <p>Խոցելի սոցիալական խմբերը, որոնց համար բարձրացված է ԲԿ մատչելիությունը</p>	<p>2012 - 2015 թթ.</p>	<p>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ</p> <p>Լրացուցիչ</p> <p>ֆինանսավորում չի պահանջում</p>	
--	---	--	--	--	------------------------	---	--

			ուղղվածության տարբեր ծրագրերի իրականացում:			2012 -2020 թթ.		
						2012թ-ից սկսած		
6.	Բարձրագույն կրթության ֆինանսավորում	Բոլոնիայի գործընթացի համատեքստում բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի բարելավում	Ըստ մասնագիտությունների վարձավճարների գնագոյացման մեթոդաբանության մշակում և կիրառում:  Բարձրագույն կրթության հասանելիությունը մեծացնելու նպատակով ուսանողի աջակցման ծառայությունների և	Բարձրագույն կրթական համակարգի ֆինանսավորման մեխանիզմները բարելավված են  Վարձավճարները սահմանված են ըստ նոր մեթոդաբանության	Բարձրագույն կրթության մասնագիտությունների թիվը, որոնց ուսման վարձերը վերանայված են ըստ մեթոդաբանության  ՆՄՀ-ի կողմից ֆինանսավորված ծրագրերի թիվը	2012 - 2014 թթ.              2015 -2020 թթ.	ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ        Պետական բյուջե	ՀՀ ԿԳՆ



			<p>նոր մեխանիզմների ներդրում, ուսման վարձերի աջակցության հիմնադրամի կամ ուսանողական վարկային համակարգի ստեղծում:</p> <p>Նորարարությունների մրցակցային հիմնադրամի ստեղծում և բարձրագույն կրթության որակի բարելավմանն ուղղված բուհերի նորարարական և զարգացման ծրագրերի իրականացում:</p>	Նորարարությունների մրցակցային հիմնադրամը ստեղծված է		2012 -2020 թթ.		
7.	Ուսանողական կենտրոն ուսուցում	Ուսանողական կենտրոն ուսուցման սկզբունքների ներդրում ՀՀ	Ուսանողների կարիքների պարբերական գնահատում՝ ուսանողական կենտրոն ուսուցման, կրթական	Շրջանավարտների զբաղվածության կայունությունը նպաստող կրթական վերջնարդյունքները մշակված են	Կրթական ծրագրերի անհատականացվածության աստիճան	2013 - 2014 թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ՀՀ ԿԳՆ

		<p>բարձրագույն կրթության համակարգում</p>	<p>վերջնարդյունքների հենքով կրթական ծրագրերի կազմակերպման նպատակով:</p> <p>Ուսանողակենտրոն ուսուցմամբ կրթության կազմակերպման մեթոդական ուղեցույցի մշակում և տրամադրում բուհերին:</p> <p>Բուհերի կառավարման գործընթացում ուսանողների դերի և մասնակցության բարձրացման, ինչպես նաև ուսումնական ծրագրերի վերանայման գործընթացում ուսանողների ներգրավածության բարձրացում:</p> <p>Ուսանողակենտրոն ուսուցման ուղղությամբ դասախոսական կազմի վերապատրաստման</p>	<p>Ուսանողների մասնակցությունը ԲԿ կառավարման և ակադեմիական գործընթացում բարձրացված է</p>	<p>Բուհի կառավարման և ակադեմիական գործընթացում ներգրաված ուսանողների տոկոսը</p>	<p>2013 -2014 թթ.</p> <p>2012 – 2020թթ.</p>	<p>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ</p>	<p>ՀՀ բուհեր</p>
--	--	--	--	--	---	---	--	------------------

			<p>մեթոդական ուղեցույցների մշակում և դասախոսների վերապատրաստումնե րի իրականացում բուհերի կողմից:</p> <p>Հայաստանի ուսանողական կառույցների համագործակցում Եվրոպական ուսանողական կառույցների հետ և Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի անդամակցում Եվրոպական ուսանողների միությանը</p>		<p>Ուսանողակենտրոն մեթոդով վերապատրաստված դասախոսների թիվը</p>	<p>2013-2020թթ.</p>		
						<p>2012-ից սկսած</p>		

8.	Կրթություն և հետազոտություններ	Մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերում հետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացում	Մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերում հետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացման պատակով առարկայական ծրագրերի և ուսումնական պլանների վերանայում:	Մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերում առարկայական ծրագրերը և ուսումնական պլանները վերանայված են:	Վերանայված մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերի թիվը:	2013-2016թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում,	ՀՀ ԿԳՆ ՀՀ բուհեր
9.	Թափանցիկության գործիքներ	Հայաստանի ԲԿ և ՄՄԿ կրթության համակարգում, թափանցիկ միջավայրի ձևավորում  Բուհերի ազգային դասակարգման և վարկանիշային համակարգերի ներդրում	Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծում և գործարկում:  ԲՈՒՀ-երի և ՄՄՈՒՀ-երի վիճակագրական տվյալների պարբերական հավաքագրում, վերլուծում և հրապարակում:  Մասնագիտական ուսումնական հաստատությունների ազգային	Ներդրված է մասնագիտական կրթության տեղեկատվական համակարգը (ՄԿՏՀ)  Իրականացվում է բուհերի վարկանիշավորում և դասակարգում	ՄԿՏՀ –ից և վարկանիշային համակարգից օգտվողների թիվը	2012-2020թթ.  2013 –ից սկսած	ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ  Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում  ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	ՀՀ ԿԳՆ  ՀՀ Բուհեր

			<p>դասակարգման համակարգի մշակում և ներդրում:</p> <p>Միջազգային վարկանիշային (ranking) համակարգերի սկզբունքներին համապատասխան ՀՀ ԲՈՒՀ-երի ազգային վարկանիշավորման մեթոդաբանության, չափանիշների մշակում և ներդրում:</p>			2012 - 2014 թթ.		
						2012 -2014թթ.		
10	Զբաղվածունակություն	ԲԿ, ՆՄՄԿ և աշխատաշուկայի միջև կապի ամրապնդում և սոցիալական գործընկերության խթանում	<p>ԲԿ, ՆՄՄԿ և գործարար միջավայրի միջև համագործակցության ներկայիս վիճակի ուսումնասիրություն:</p> <p>ԲԿ և ՆՄՄԿ գործարար միջավայրի միջև համագործակցության միջազգային ըդունված</p>	ԲԿ, ՆՄՄԿ և գործարար միջավայրի միջև համագործակցության ներկայիս վիճակը ուսումնասիրված է	ԲԿ և ՆՄՄԿ համագործակցող գործարարների թիվը	2013-2015թթ.	ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	ՀՀ ԿԳՆ
				ԲԿ և ՆՄՄԿ գործարար միջավայրի միջև համագործակցության			Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	

			<p>ձևերի ուսումնասիրություն:</p> <p>ԲԿ և ՆՄՄԿ գործարար միջավայրի միջև համագործակցության և սոցիալական գործընկերության ռազմավարության մշակում և իրագործում:</p>	<p>միջազգային ըդունված ձևերը ուսումնասիրված են</p> <p>ԲԿ, ՆՄՄԿ և գործարար միջավայրի միջև համագործակցության և սոցիալական գործընկերության ռազմավարությունը մշակված</p>		<p>2013-2015թթ</p> <p>2013 թ-ից սկսած</p>		
11	<p>Լրացուցիչ և շարունակական կրթություն</p>	<p>Բնակչության կրթական պահանջների բավարարում և արդի հասարակության մարտահրավերներին դիմակայելու կարողություններ ի զարգացում, մասնավորապես՝</p> <p>Աջակցել</p>	<p>Լրացուցիչ և շարունակական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում մշտադիտարկման իրականացում և համապատասխան տվյալների բազայի ստեղծում, վերլուծական աշխատանքների իրականացում և առկա իրավիճակի գնահատում:</p>	<p>Լրացուցիչ և շարունակական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում իրականացվում է մշտադիտարկում և ստեղծված է համապատասխան տվյալների բազա</p>		<p>2012 թ.</p>	<p>Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում</p>	<p>ՀՀ ԿԳՆ</p>

	<p>զբաղվածների մասնագիտական որակավորման անընդհատ բարձրացմանը և կատարելա - գործելու իրենց հմտությունները՝ “ողջ կյանքի ընթացքում ուսումնառության” սկզբունքներին համապատասխան:</p> <p>Աջակցել գործազուրկների աշխատանքի անցնելու հարցում՝ գործատուների պահանջով կազմակերպվող դասընթացների միջոցով:</p>	<p>&lt;&lt;ՀՀ լրացուցիչ և շարունակական կրթության մասին Ազգային զեկույց&gt;&gt; մշակում, որի հիմնական նպատակն է ՀՀ լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտի զարգացման ապահովումը:</p>	<p>“ՀՀ ցկյանս ուսումնառության մասին&gt;&gt; հայեցակարգից բխող և Ազգային զեկույցի սկզբունքներին համապատասխան ՀՀ լրացուցիչ և շարունակական կրթության ռազմավարության և գործողությունների պլանի մշակում:</p>	<p>Մշակված է &lt;&lt;ՀՀ լրացուցիչ և շարունակական կրթության մասին Ազգային զեկույց&gt;&gt;-ը,</p> <p>Մշակված են ռազմավարությունը, գործողությունների պլանը</p>		<p>2012թ.</p>		
--	--	---	---	---	--	---------------	--	--

			<p>շարունակական կրթության (մեծահասակների կրթության) մասին&gt;&gt; ՀՀ օրենքի նախագծի կամ առկա օրենքներում փոփոխությունների մշակման ուղղությամբ աշխատանքների իրականացում՝ համապատասխան ոլորտի կարգավորման նպատակով:</p> <p>Համապատասխան պետական կրթական ծրագրերի մշակում և իրականացում՝ ոլորտի հիմնախնդիրների վերհանման և դրանց ուղղված համապատասխան գործողությունների սահմանման միջոցով:</p> <p>Լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտում առաջավոր փորձ ունեցող երկրներում գործող համակարգերի տարբերակների</p>	<p>Մշակված են համապատասխան պետական կրթական ծրագրեր</p>		<p>2013թ.</p> <p>2014թ.</p>		
--	--	--	---	--	--	-----------------------------	--	--



			<p>ուսումնասիրությունն և դրանց արդյունավետ տեղայնացման և կիրառման նպատակով աշխատանքների իրականացում:</p> <p>Ուսուցման ազգային հիմնադրամի գործունեության իրականացում`</p> <p>- աշխատաշուկայի և գործատուների պահանջարկի ուսումնասիրություններ ի անցկացում և հրապարակում;</p> <p>- աշխատաշուկայի և գործատուների պահանջներին համապատասխան աշխատունակ բնակչության աշխատանքային որակավորման բարձրացման և վերաորակավորման կարճատև դասընթացների կազմակերպում;</p> <p>- կարճատև ուսուցում անցած անձանց</p>	<p>Ուսումնասիրված է լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտում առաջավոր փորձ ունեցող երկրներում գործող համակարգերի տարբերակները</p> <p>Ուսուցման ազգային հիմնադրամը գործում է և լիարժեք իրականացնում իր գործառույթները</p>		<p>2015թ.</p>		
--	--	--	---	---	--	---------------	--	--

			<p>աշխատանքային որակավորման անկախ հավաստագրմանը աջակցում՝ որակի հավաստման միջազգային չափորոժիչներն համապատասխան;</p> <p>- մասնագիտական ու մեթոդական աջակցություն ուսուցում իրականացնող կազմակերպություններին :</p>			2012թ.-ից սկսած		
12.	Միջազգային համագործակցություն	<p>1. ԵՄ-ի և ԵԲԿՏ-ի երկրների հետ երկկողմ և բազմակողմ համագործակցություն և ԵՄ համագործակցության ծրագրերում ընդգրկման ընդլայնում</p> <p>2. ԵՄ-ի և ԵԲԿՏ-ի երկրների հետ կրթական և գիտական համագործակցու</p>	<p>Դպրոցների և ուսուցիչների ներգրավում հանրակրթության ոլորտում սկսվող ԵՄ-ի հետ համագործակցության ծրագրերում՝ e-twinning, S2S:</p> <p>ԵՄ աջակցության գործիքներին՝ TAIEX, TWINING, ոլորտային քաղաքականություն</p>	<p>ԵՄ-ի և ԵԲԿՏ-ի երկրների հետ գործում են ուսանողների, դասախոսների, կրթական համակարգի փորձագետների միջև փոխանակման ծրագրեր:</p> <p>Հաստատվել են հորիզոնական կապեր ՀՀ և ԵՄ-ի/ԵԲԿՏ-ի երկրների ուսումնական</p>	<p>ԵԲԿՏ երկրների հետ կնքված համաձայնագրերի և ծրագրերի թիվը</p> <p>ԵՄ համագործակցության ծրագրերում և գործիքներում ՀՀ մասնակցության</p>	2013թ.-ից սկսած	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ՀՀ ԿԳՆ

		<p>թյան ընդլայնում</p> <p>3. Բարձրագույն ուսումնական և հետազոտական հաստատությունների միջև ուղղակի կապերի հաստատում և զարգացում</p> <p>4. Ուսանողների, դասախոսների և գիտնականների փոխանակում՝ փորձի, կրթական և գիտական ներկայացման, ինչպես նաև համատեղ ծրագրերի իրականացման նպատակով:</p>	<p>ն աջակցություն և այլն, ինչպես նաև ԵՄ համագործակցության ծրագրերին՝ TEMPUS, ERASMUS, Leonardo da Vinci և այլն ՀՀ մասնակցության ընդլայնում:</p> <p>Միջպետական համագործակցության ընդլայնում, նոր համաձայնագրերի և գործնական ծրագրերի կնքում, մասնավորապես.</p> <p>- «ՀՀ ԿԳ նախարարության և Կիպրոսի Հանրապետության կրթության եւ մշակույթի նախարարության միջև կրթության եւ գիտության բնագավառներում 2011-2014թթ. համագործակցության մասին» ծրագիր;</p>	<p>հաստատությունների միջև:</p> <p>Միջպետական համագործակցությունը ընդլայնվել է</p> <p>Եւ ծրագրերի մեջ ՀՀ մասնակցությունը ընդլայնվել է</p>	<p>աստիճանը</p>	<p>2012թ-ից սկսած</p>		
--	--	--	--	--	-----------------	-----------------------	--	--

			<p>- «ՀՀ կառավարության և Դանիայի Թագավորության կառավարության միջև կրթության եւ գիտության բնագավառներում համագործակցության մասին» համաձայնագիր;</p> <p>«ՀՀ կառավարության և Բելգիայի Թագավորության կառավարության միջև կրթության և գիտության բնագավառներում համագործակցության մասին» համաձայնագիր;</p> <p>«ՀՀ կառավարության և Ֆինլանդիայի Հանրապետության կառավարության միջև կրթության և գիտության բնագավառներում համագործակցության մասին» համաձայնագիր;</p> <p>«ՀՀ</p>				
--	--	--	---	--	--	--	--

			<p>կառավարության և Էստոնիայի Հանրապետության կառավարության միջև կրթության և գիտության բնագավառում համագործակցությ ան մասին» համաձայնագիր;</p> <p>«ՀՀ կառավարության և Լատվիայի Հանրապետության կառավարության միջև կրթության և գիտության բնագավառում համագործակցությ ան մասին» համաձայնագիր;</p> <p>«ՀՀ կառավարության և Լիտվայի Հանրապետության կառավարության միջև կրթության և գիտության բնագավառում համագործակցությ ան մասին» համաձայնագիր;</p> <p>«ՀՀ կառավարության և</p>				
--	--	--	--	--	--	--	--

			<p>Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Երեւան քաղաքում ռուս- հայկական համալսարանի հիմնադրման եւ գործունեության պայմանների մասին» համաձայնագիր;</p> <p>«ՀՀ կառավարության և Ռումինիայի Հանրապետության կառավարության միջև մշակույթի, կրթության եւ գիտության բնագավառներում համագործակցույթ ան մասին» 2011- 2014թթ. գործնական ծրագիր;</p> <p>«ՀՀ կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև կրթության և գիտության բնագավառներում 2011-2015</p>				
--	--	--	--	--	--	--	--

			տարիների համար համագործակցության մասին» համաձայնագիր:					
--	--	--	---	--	--	--	--	--